



ԿոՄիտաս

Արշակ Չոպանյանին (17 օգոստոս, Բեռլին)

Միրելի՛ բարեկամ,

Ուղարկում եմ այսօր նամակիս հետ միաժամանակ «Հայ գեղջուկ երաժշտության» ուսումնասիրության առաջին տետրը. սկսեցէք կամաց-կամաց թարգմանել, ես էլ կհասցնեմ միսները, տետրակ-տետրակ: Ուղարկեցէք թարգմանած ժողովրդական երգերից հետևեալների ֆրանսերէնը, որ տպել պէտք է տամ բազմաձայն և միաձայն՝ դաշնակի նուագով, այստեղ. գերմաներէն էլ թարգմանել տուի մի հմուտ բանաստեղծի. ուսուցչապետս խորհուրդ է տալիս հայերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով տպել տալ, որ օտարներին մեր եղանակները շուտ ըմբռնել տալու գործը դիւրացրած լինենք...

Աշխատութեան վերնագիրը դիտմամբ «Հայ գեղջուկ երաժշտութիւն» դրի, որովհետև քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել. իսկ ժողովրդական բառը շատ ընդհանուր է և ընդգրկում է բոլորին, այնինչ այս երգերը յատկապէս գեղջուկի ստեղծագործութիւններն են, իսկ աշխատութեան մեջ ժողովրդական բառը գործածել եմ, որովհետև գրագէտներն ու կրթուած դասակարգը սովորել է այդ անունը տալ, մանաւանդ, երբ երգի հետն միացած գիւղական ժողովուրդին: Աշխատութիւնս էլ նուիրեցի պ. Ա.Մանթաշեանին, որովհետև նորան եմ պարտական արդի ուսման պաշարովս՝ եվրոպական մտքով...

Մաղթելով Ձեզ քաջողջութիւն, մնամ Ձեզ շատ սիրալիք բարևելով
Կոմիտաս Վարդապետ